ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԷԴԳԱՐ ԷԴԻԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈԱԼԻՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АЛЕКСАНЯН ЭДГАР ЭДИКОВИЧ

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ПАРТИЙНОЙ СИСТЕМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В УСЛОВИЯХ КОАЛИЦИОННОГО ПРАВИТЕЛЬСТВА

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности ИГ.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2023

Ատենախոսության թեման հաստատվել է
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում
Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների դոկտոր **Մարգարյան Մարիամ Մամիկոնի**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների դոկտոր **Քեռյան Գարիկ Միշայի**
քաղաքական գիտությունների թեկնածու **Գրիգորյան Նարեկ Հրանտի**
Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի դեկտեմբերի 21-ին, ժամը 14.00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում: Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2023 թվականի նոյեմբերի 11-ին:

056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պատմական
գիտությունների թեկնածու, դոցենտ Վահրամ Պետրոսյան

Тема диссертации утверждена в **Академии государственного управления РА**
Научный руководитель:
доктор политических наук **Маргарян Мариам Мамиконовна**
Официальные оппоненты:
доктор политических наук **Керян Гарик Мишаевич**
кандидат политических наук **Григорян Нарек Грантович**
Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита состоится 21 декабря 2023г. в 14.00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 “Политология и международные отношения” ВАК РА. Адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.
Автореферат разослан 11 ноября 2023г.

Научный секретарь
специализированного совета 056,
кандидат исторических наук, доцент Ваграм Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Նոր աշխարհակարգի կայացման մարտահրավերներին համարժեք պատասխանելու նպատակով և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կուսակցական համակարգի զարգացման միտումներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել քաղաքական նոր՝ ցանցավորված անորոշություններով ու խառնաշփոթությամբ (տուրբուլենտություն) հագեցած իրողությունների մարտահրավերներին ներդաշնակ ուսումնասիրել կոալիցիոն համագործակցությունը: Այս համատեքստում կոալիցիոն կառավարությունների գործառման հիմնախնդիրների համակարգային վերլուծությունը հրամայական է՝ պայմանավորված ՀՀ-ում համագործակցային մշակույթի հաստատմամբ և քաղաքական զարգացման ճգնաժամերի էվոլյուցիոն հաղթահարմամբ: Արդի հայ հասարակության կերպափոխման բազմաչափ գործընթացն արդիականացրել է կոալիցիոն համագործակցության և կոալիցիոն կառավարությունների ձևավորման հիմնախնդիրները: Ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում տեղի ունեցող կերպափոխումները վկայում են, որ կոալիցիոն կառավարությունների օգնությամբ արմատական փոփոխությունների մեջ գտնվող երկրները, նպատակամետ իրականացնելով արդյունքի կառավարում, առավել արագ են հաղթահարում քաղաքական զարգացման ճգնաժամերը:

Արդի քաղաքական տուրբուլենտության պայմաններում ՀՀ-ում կոալիցիաները անհրաժեշտություն են ոչ միայն հանրային շահի գերակայության կամ մասնակցային ժողովրդավարության կիրառման, այլև ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության ապահովման առումով: Ենթադրվում է, որ քաղաքական կոալիցիաները համագործակցության մշակույթի զարգացման այն կերպն են, որոնց օգնությամբ հնարավորինս մեղմվում է գաղափարական տարբեր արժեքային բևեռներում գտնվող քաղաքացիների հեղափոխականացվածությունը: Կոալիցիաների նկատմամբ նմանօրինակ մոտեցումը պայմանավորված է այն մարտահրավերներով, որոնք հետևանք են արդի անորոշությունների ու տուրբուլենտության՝ քաղաքական զարգացման ճգնաժամեր, մարգինալություն, աղքատություն, կոռուպցիա, համակարգային փլուզումներ (պանդեմիա, արտակարգ իրավիճակներ), աշխարհաքաղաքական փոփոխություններ, անվտանգ ապագային միտված սցենարներ, արդյունքի կառավարում և այլն: ՀՀ-ում կուսակցական համակարգի և կոալիցիոն համագործակցության զարգացումը՝ որպես բազմաչափ փոփոխությունների ռազմավարական գործընթաց, պայմանավորված է ազգային անվտանգության ընդարձակված օրակարգի և արդյունքի կառավարման, ինչպես նաև ժողովրդավարության որակի միջև եղած կապի համալիր ուսումնասիրմամբ: Վերոշարադրյալով էլ հիմնավորենք հետազոտության արդիականությունը պայմանավորող հետևյալ հանգամանքները.

- սոցիալական ու քաղաքական փակ և բաց համակարգերի արժեքաբանական հիմքերի զուգամիտման ապահովման հիմնավորում՝ պայմանավորված իշխանության իրականացման խաղային տրամաբանությամբ,

- Ժողովրդավարական անցման գործընթացում ՀՀ կուսակցական համակարգի բնականոն զարգացման ուսումնասիրություն՝ հաշվի առնելով քաղաքական տուրբուլենտության և անորոշությունների մարտահրավերները,
- կոալիցիոն կառավարության կազմակերպական նպատակաբանական և գաղափարական բազմաչափությունը՝ որպես կուսակցական համակարգի զարգացման գործոնի դիտարկում,
- ՀՀ-ում կոալիցիոն կառավարության գործառման դինամիկայում կուսակցության ինստիտուցիոնալ պատասխանատվության հաստատում,
- կոալիցիաները՝ որպես Հայաստանի Հանրապետության խորհրդարանական մշակույթի բնականոն զարգացման գործոնի փաստարկում,
- տրիպարտիզմի հաստատման հիմնավորում՝ որպես ՀՀ խորհրդարանական կառավարման պայմաններում խորհրդարանական վերահսկողության և պատասխանատվության գործառման գերակայության ապացույց:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն ատենախոսության նպատակը կոալիցիոն կառավարության պայմաններում ՀՀ կուսակցական համակարգի զարգացման ուսումնասիրությունն ու տեսական առաջարկությունների մշակումն է, ինչպես նաև կոալիցիոն կառավարությունների գործառման սոցիալական տարածության ընդարձակման միջոցով կուսակցական համակարգի փոխակերպումների արդյունավետության դիտարկումը՝ համագործակցության մշակույթի կայացման տիրույթներում: Միևնույն ժամանակ կոալիցիոն համագործակցությունն ուսումնասիրվել է բաց և փակ համակարգերում հասարակական և քաղաքական գործընթացների զարգացման տրամաբանության սահմաններում՝ ՀՀ-ում հասարակական ընտրության տարակարծությունները բացահայտելու համար: Նշված նպատակի իրականացման նկատառումներով առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- **ուսումնասիրել** կոալիցիոն կառավարությունների օրինակները՝ որպես մարգինալ իրավիճակային արդիականացման գործընթացի հետևանք,
- **բացահայտել** բաց և փակ համակարգերում կուսակցական կոալիցիաների գործառման առանձնահատկությունները խաղերի տեսության համատեքստում,
- **լուսաբանել** կառավարության փոփոխությունների ռազմավարական սկզբունքները գծային ազատականացման իրավիճակում,
- **դիտարկել** կոալիցիոն կառավարության և կուսակցական համակարգի զարգացման փոխպայմանավորվածությունը՝ որպես ժողովրդավարական անցումից համախմբման, ինչպես նաև ժողովրդավարության որակի և համագործակցության մշակույթի գործառման գործընթաց,
- **հիմնավորել** խորհրդարանային մշակույթը՝ որպես ՀՀ քաղաքական հասարակության զարգացման պայման,
- **փաստարկել** քաղաքական և հասարակական դիսկուրսը՝ որպես կուսակցական համակարգի բնականոն զարգացման գործընթաց,
- **մշակել** հանրային, քաղաքական, պետական և գլոբալ կառավարման նոր սոցիալական պատասխանատվության ռազմավարություն ՀՀ-ում՝ կոալիցիոն իշխանության իրականացման մշակույթի ապահովման համար,

• **փաստարկել** ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման նպատակադրված ռազմավարության անհրաժեշտությունը ՀՀ-ում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ կուսակցական համակարգի զարգացման գործընթացն է՝ ժողովրդավարական անցումից համախմբման պայմաններում, հետազոտության առարկան՝ կուսակցական համակարգի զարգացման գործընթացում կոալիցիոն կառավարությունների ուսումնասիրումը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Կոալիցիոն համագործակցության ուսումնասիրության մեթոդների ընտրության հարցում որոշիչ են ՀՀ-ում քաղաքական զարգացման ճգնաժամերի (բաշխման, մասնակցության, շարժունակության, ինքնության, լեգիտիմության) հաղթահարման արդի հրամայականները: Կոալիցիոն կառավարության պայմաններում ՀՀ կուսակցական համակարգի զարգացման ուսումնասիրությունն իրականացվել է քաղաքական փիլիսոփայության, կուսակցագիտության (պարտոլոգիա), անցումագիտության, համախմբագիտության, քաղաքական մարքեթինգի և քաղաքական ցանցագիտության շրջանակներում: Նշված գիտաճյուղերի տիրույթներում օգտագործվել է ինչպես համակարգային, այնպես էլ նոր քաղաքականության հիմքի վրա դրսևորվող վարքաբանական մեթոդաբանությունը՝ զուգամիտելով կոալիցիոն համագործակցության ինստիտուցիոնալ, սոցիալ-հոգեբանական և գործառութակառուցվածքային մոտեցումները: Օգտագործվել են սիներգետիկ և մարքեթինգային մեթոդները: Ակնհայտ է, որ սիներգետիկան՝ որպես դիսսիպատիվ (ցրող) բարդ համակարգերի ինքնակազմակերպման տեսություն, բազմիցս ապացուցել է իր ֆունկցիոնալությունը կուտակված խնդիրներին հեռանկարային լուծումներ առաջարկելու, նոր առաջացող քաոսային ու ճգնաժամային երևույթների պատճառները բացահայտելու, ինչպես նաև մարդու, հասարակության և բնության էվոլյուցիայի բնույթը իսկության մեջ գնահատելու գործում: Այս ամենը հնարավորություն է տվել կոալիցիոն համագործակցության՝ որպես ՀՀ կուսակցական համակարգի զարգացման գործընթացը դիտարկել գաղափարական բազմաչափության մեջ՝ տարբերակելով ժողովրդավարական անցում, անցումից համախմբում գործընթացների արժեքային կողմնորոշիչները:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Կուսակցությունների և կուսակցական համակարգի՝ որպես քաղաքական համակարգի առանցքային ինստիտուտի ուսումնասիրումը երկար ճանապարհ է անցել՝ Արիստոտելից Թ. Հոբս և Ալ. Թոքվիլ, մինչև մեր օրերը: 17-րդ դարից Թ. Հոբսը, ինչպես և «հասարակական դաշինքի» այլ տեսաբաններ՝ Բ. Սպինոզան, Ջ. Լոկը, Ժ.-Ժ. Ռուսոն և այլք, մարդկության պատմությունը բաժանում են երկու փուլի՝ բնական (կամ մինչքաղաքացիական) և քաղաքացիական (կամ քաղաքական): Նրանք դա հիմնավորում էին կուսակցությունների առաջացմամբ և զարգացմամբ: Կուսակցությունները որպես քաղաքական համակարգի ինստիտուտ ուսումնասիրել են Մ. Դյուվերժեն, Կ. ֆոն Բայմեն, Ջ. Սարտորին[1]:

Այս համատեքստում հիմք ընդունելով Հ. Հակենի գաղափարական բազմաչափության ուսումնասիրման հայեցակետը՝ աշխատանքում դիտարկվում է բաց և փակ համա-

---

[1] **Дюверже М.,** Политические партии: Пер. с фр. М.: Академический проект, 2000; **Байме К. фон,** Политическая теория: эмпирическая политическая теория / Политическая наука: новые направления Пер. с англ. М. М. Гурвица, А. Л. Демчука. Научн. редактор Е. Б. Шестопал. - М.: Вече-Москва, 1999; **Sartori G.**, Parties and Party Systems: A Framework for Analysis, 1976/2005.

կարգերի էներգետիկ դաշտերում մարդկանց միավորման և «իշխանության իրականացման մշակույթի էներգիան», «կենսադաշտը» և «էներգատեղեկատվական համակարգը»[2]: Բաց համակարգերի ուսումնասիրության հիմքում Ի. Պրիգոժինը դրեց թերմոդինամիկայի ամենափոքր արտադրության սկզբունքը, որով հիմնավորվեց հասարակական կյանքի գաղափարական բազմաչափության համադրելիության անհրաժեշտությունը: 1940-ական թվականներին Ջ. ֆոն Նեյմանը և Օ. Մորգենշտերնը դիտարկեցին սուբյեկտների կողմից հանուն իշխանության իրականացվող քաղաքական խաղը՝ որպես ռացիոնալ վարքաբանություն[3]: Այդուհետ խաղերի տեսությունը կիրառվեց քաղաքական գիտության մեջ Լ. Շապլեյի և Մ. Շուբիկի կողմից՝ 1954 թ. American Political Science Review-ում հրատարակված «Կոմիտեների համակարգում իշխանության բաշխման գնահատման մեթոդը» աշխատությունում[4]:

Հատուկ ուշադրության է արժանի Յու. Հաբերմասի մոտեցումը: Դիտարկելով կերպափոխման և ժողովրդավարական սկզբունքների հաստատման գործընթացը՝ նա կարևորեց փողը, իշխանությունը և համերաշխությունը, որոնց շնորհիվ հասարակության անդամներն ու կուսակցությունները բավարարում են կառավարման իրենց պահանջմունքը[5]: Սա դեռևս հիմք չի տալիս ենթադրելու, որ վերացել են կուսակցական նկրտումները. դրանք պարզապես դրսևորվում են ավելի «քաղաքակիրթ» ձևով: Ըստ կուսակցականագետ Օ. Քիրխհայմերի՝ ժողովրդավարացման պայմաններում գտնվող երկրների նոր ձևավորվող կուսակցական համակարգերի քաղաքական միջավայրի փոփոխությունները հանգեցրին «բազմակողմանի» (catch-all) կուսակցությունների ձևավորման[6]: Ռ. Կացը և Պ. Մեյերը շեշտում են այն հանգամանքը, որ «պայմանագրային» կուսակցությունների հայտնվելը հետևանք էր ընտրողների աճող անտարբերության և բխում էր արևմտյան կուսակցությունների նոր քաղաքական միջոցներ ունենալու անհրաժեշտությունից[7]: Նոր ժողովրդավարություններում կուսակցությունների կազմակերպական զարգացման միտումների տեսական հետազոտություն է կատարել կուսակցականագետ Հ. Կիտշելտը[8]: Քաղաքական ուժերի կոալիցիոն միավորման տեսությունը ավելի հաճախ

---

[2] **Хакен Г.,** Синергетика: Иерархии неустойчивостей в самоорганизующихся системах и устройствах: Пер. с англ. -М.: Мир, 1985.

[3] **Нейман Дж. фон, Моргенштерн О.,** Теория игр и экономическое поведение. Перев. с англ. под. ред. и с доб. Н. Н. Воробьева, М.: Наука, 1970.

[4] **Shapley L., Shubik M.,** A method for evaluating the distribution of power in a committee system, American Political Science Review, 48 (1954).

[5] **Хабермас Ю.,** Демократия. Разум. Нравственность. «Московские лекции и интервью». М.: АО «KAMI» Academia., 1995.

[6] **Kirchheimer O.,** The Transformation of West European Party Systems // Political Parties and Political Development / J. La Palombara, M. Weiner (eds.). – Princeton, N. J.: Princeton University Press, 1966.

[7] **Katz R., Mair P.,** Changing Models of Party Organization and Party Democracy. The Emergence of the Cartel Party // Party Politics. Vol. 1 N 1. 1995, https://politicacomparata.files.wordpress.com/2011/03/katz-and-mair-1995-changing-models-of-party-organization.pdf (Վերջին դիտումը՝ 16.06.2023):

[8] **Kitschelt H.,** The Formation of Party Cleavages in Post-communist Democracies: Theoretical Propositions. «Party Politics», Vol. 1, 1995.

օգտագործում են հետազոտող-համեմատագետները՝ պաշտպանելով կամ հերքելով կոալիցիաների ձևավորման տեսական մոտեցումները և գործնական օրինակները[9]:

20-րդ դարի 50-ական թվականներից մինչ այսօր քաղաքական գիտության շրջանակներում ընթացող փոփոխությունները կոալիցիոն համագործակցության ապահովման տարբեր ձևաչափեր են ենթադրում: Հատկապես կարևորվեց քաղաքական համագործակցության կառուցվածքային ձևաչափը, որի հիմքի վրա էլ, համակարգելով սոցիալական անվտանգության հայեցակարգը, Պ. Ա. Սորոկինը հարաբերական անկախության մեջ ուսումնասիրեց զանգվածների մարգինալության, դեմագոգիայի և մեքենայությունների մակարդակները քաղաքական կուսակցությունների (ուժերի) պատասխանատվության, անպատասխանատվության, ինչպես նաև խրախուսանքի և պատժի փոխհարաբերության տիրույթներում[10]: 20-րդ դարի 60-ական թվականներին «Հռոմեական ակումբը»[11] համատեղ քննարկեց բնության էկոլոգիան և բանականության էկոլոգիան՝[12] իշխանական հարաբերություններում տեղ ու դեր ունենալ ոչ միայն գերիշխելով, այլև համագործակցելով:

Կուսակցությունների՝ որպես քաղաքական համակարգի առանցքային ինստիտուտի դերի ու նշանակության ուսումնասիրությունները նորովի սկսեցին մեկնաբանել՝ պայմանավորված կուսակցությունների գրաված կամ ընդարձակման հակված սոցիալական տարածության էկոլոգիացենտրիզմով: Արդյունքում, Մ. Օստրոգորսկու[13] դասական մոտեցումներին զուգահեռ, Ջ. Սարտորին ուսումնասիրեց կուսակցությունների սոցիալական տարածությունների ընդարձակման հիմնախնդիրը՝ շեշտադրելով կոալիցիոն կառավարությունների ստեղծման անհրաժեշտությունը[14]: Ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում ծավալված կուսակցությունների զարգացման և սոցիալական

---

[9] **De Swaan A.,** Coalition Theories and Cabinet Formation: A study of Formal Theories of Coalition Formation Applied to Nine European Parliaments after 1918. – Amsterdam: Elsevier, 1973. **Taylor M., Laver M.,** Government Coalitions in Western Europe // European Journal of Political Research. 1973. Vol. 1. N 3.

[10] **Сорокин П.,** Главные тенденции нашего времени / Пер. с англ., сост. и предисл. Т.С. Васильева. - М.: Наука. 1997; **Сорокин П.,** Человек и общество в условиях бедствий: Влияние войны, революции, голода, эпидемии на интеллект и поведение человека, социальную организацию и культурную жизнь / Перевод с английского В. В. Сапова. Издательский дом «Міръ» Санкт-Петербург 2012.

[11] **Медоуз Д. Х., Рандерс Й.,** За пределами роста / Д. Х. Медоуз, Д. Л. Медоуз, Й. Рандерс. - М.: Прогресс, «Пангея», 1994; **Брудный А., Кавтарадзе Д.**, Сопряженное развитие природы и общества // Экология малого города. ОНТИ НЦБИ АН СССР Пущино, 1987; **Печчеи А.,** Человеческие качества. М., «Прогресс», 1980; **Шварц Е.,** Сохранение биоразнообразия: сообщества и экономисты / Е.А. Шварц. – М.: Т-во МК, 2004.

[12] **Парк Р.,** Экология человека // Теория общества: фундаментальные проблемы / Под ред. А. Ф. Филиппова. М.: Канон-пресс-Ц, 1999.

[13] **Острогорский М.,** Демократия и политические партии. – М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 1997; **Михельс Р.,** Социология политической партии в условиях демократии. // Антология мировой политической мысли. Т.2. / Отв. ред. Т. А. Алексеева. М., 1997; **Дюверже М.,** Политические партии. / Пер. с франц., М., Академический Проект, 2000; **Brams S.,** Game Theory and Politics. New York: Free Press, 1975. Rev. ed., 2004 (Dover).

[14] **Sartori G.,** Parties and Party Systems: A Framework for Analysis, ECPR Press, 1976/2005.

տարածությունների գաղափարական ընդարձակման միջոցով կոալիցիոն կառավարությունների գործառման արդյունավետության խնդիրներն ուսումնասիրեցին Ս. Հանթինգթոնը, Ռ. Դարենդորֆը, Ռ. Դալը, Ա. Պշևորսկին և հատկապես Ա. Լեյփհարթը[15] իր «Մեծ կոալիցիա» տեսությամբ: Այս համատեքստում, վերարժևորելով բազմամակարդակ կերպափոխումների ազդեցությունը կուսակցական համակարգի զարգացման վրա, կարևորվեցին սոցիալական տարածության ընդարձակման միջոցով ժողովրդավարության որակի բարձրացման հիմնախնդիրները[16]: Կոալիցիոն կառավարության գործառման պայմաններում ՀՀ կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրներն ուսումնասիրելիս որդեգրել ենք այն մոտեցումը, որ գծային ազատականացման արդյունքում առաջացած քաղաքական զարգացման ճգնաժամերը հնարավոր է կանխել միայն ինստիտուցիոնալ պատասխանատվության և ռացիոնալացված մասնակցության աստիճանը մեծացնելով[17]: Այս նկատառումներով էլ հիմք ենք ընդունել 1990-ական թվականների սկզբին Կոպենհագենյան դպրոցի մշակած ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման հայեցակարգը՝ ընդգծելով ռազմական, քաղաքական, տնտեսական, էկոլոգիական և սոցիալական անվտանգությունների փոխպայմանավորվածությունը[18]:

---

[15] **Хантингтон С.,** Третья волна. Демократизация в конце XX века / Пер. с англ. - М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003; **Хантингтон С.,** Политический порядок в меняющихся обществах. - М.: Прогресс-Традиция, 2004; **Пшеворский А.,** Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке. Пер. с англ. / Под. ред. проф. Бажанова В. А.-М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2000; **Даль Р.,** Демократия и ее критики / Пер. с англ. под. ред. М. В. Ильина. - М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003; **Дарендорф Р.,** Современный социальный конфликт. Очерк политики свободы / Ральф Дарендорф; Пер. с нем. Л. Ю. Пантиной.- М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2002: **Лейпхарт А.,** Демократия в многосоставных обществах М.: Аспект Пресс. 1997.

[16] **Бурдье П.,** Социология социального пространства / Пер. с франц.; отв. ред. перевода Н. А. Шматко. – М.: Институт экспериментальной социологии; СПб.: Алетейя, 2007; Бурдьё П., **Социология политики:** Пер. с фр. /Сост., общ. ред. ипредисл. Н. А. Шматко. / — М.: Socio-Logos, 1993; **Карпенко Н.,** Феномен безобразного и поиск новой ценностной системы координат в искусстве XX века. / Н. А. Карпенко. // Личность – слово – социум: материалы VIII Междунар. науч.-практ. конф., 28-29 апреля 2008 г., г. Минск: в 2 ч. 2008.

[17] **Хелд Д.,** Модели демократии. Третье издание / Дэвид Хелд; перевод с англ. М. Рудакова, М.: Издательский дом «Дело», РАНХиГС, 2014; **Мюллер Ян-В.,** Споры о демократии: Политические идеи в Европе XX в. / пер. с англ. А. Яковлева. - М.: Изд. Института Гайдара, 2014; **Иноземцев В. (ред.),** Демократия и модернизация: к дискуссии о вызовах XXI века / Центр исследований постиндустриального общества; Вступ. статья В. Л. Иноземцева. - М.: Издательство «Европа», 2010; **McFaul M.,** The Forth Wave of Democracy and Dictatorship. Noncooperative Transitions in the Postcommunist World / World Politics / Vol. 54, N 2, 2002; **Լինց Խ., Ստեփան Ա.,** Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա և հետկոմունիստական Եվրոպա/Խուան Լինց, Ալֆրեդ Ստեփան.- Եր.: Կովկասի ինստիտուտ, 2011:

[18] **Buzan B.,** Rethinking Security after the Cold War // Cooperation and Conflict. Vol. 32. N 1. 1997; **Buzan B., Wæver O.,** Slippery? Contradictory? Sociologically Untenable? The Copenhagen School Replies // Review of International Studies. Vol. 23. N 2, 1997.

ՀՀ-ում կուսակցությունների և կուսակցական համակարգի ձևավորումը և տիպաբանությունն ուսումնասիրել է Գ. Քեռյանը[19]: Ժողովրդավարացման գործընթացներում կուսակցությունների և կուսակցական համակարգի կերպափոխումն ուսումնասիրել է Ա. Զաքարյանը[20], իսկ ՀՀ սոցիալ քաղաքական կերպափոխման գաղափարական հիմքերը՝ Ա. Ենգոյանը[21]: Մեր ուսումնասիրման շրջանակներում ուշագրավ են Գ. Պետրոսյանի մոտեցումները հատկապես Հայաստանի առաջին հանրապետության ընթացքում կուսակցությունների դիրքորոշումը վարվող արտաքին քաղաքականության վերաբերյալ[22], Ա. Ալեքսանյանի մոտեցումները՝ հատկապես ցիվիլարխիայի բազմակողմանի վերլուծությունը[23], Ա. Մարգարովի[24] մոտեցումները՝ կիսանախագահական ինստիտուցիոնալ դիզայնի պարագայում, Տ. Քոչարյանի մոտեցումները ազգային անվտանգության համատեքստում[25]: Ուշագրավ ենք համարում կոնսոցիատիվիզմի կիրառության վերաբերյալ Ա. Լեյփհարթի «Ժողովրդավարությունը բազմակազմ հասարակություններում. համեմատական վերլուծություն» աշխատությունը[26]: Քաղաքական զարգացման և արդիականացման, մարգինալության, լեգիտիմության, քաղաքական ընտրանու և լիդերության ինստիտուտի կերպափոխման գործընթացների, ինչպես նաև գունավոր հեղափոխության ուսումնասիրման շրջանակներում կուսակցական համակարգի զարգաց-

---

[19] **Քեռյան Գ.,** Քաղաքական կուսակցություններ: Հայաստանի իրավագետների և քաղաքագետների միութ., Եր., Մխիթար Գոշ 1996: **Քեռյան Գ.,** Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը: Գարիկ Քեռյան. –Եր.: Վան Արյան, -2002: **Քեռյան Գ.,** Քաղաքական կուսակցությունների տիպավորման մեթոդն ու չափանիշները, «Հանրային կառավարում», թիվ 2, 2006, էջ 116-125:

[20] **Զաքարյան Ա.,** Պետական կառավարման արդյունավետության հիմնահարցերը անցումային հասարակություններում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2004., թիվ 1(18), էջ 215-222: Քաղաքական կուսակցությունների ինստիտուցիոնալացման պայմանները և գործոնները, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2004., թիվ 4(21), էջ 153-164: «Ժառանգորդ» և «սահմանադիր» կուսակցությունների կազմակերպական զարգացման միտումները ժողովրդավարական կերպափոխման գործընթացում, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 2005, թիվ 4(10), էջ 151-172: Անկայունության և հատվածայնության գործոնները նոր ժողովրդավարությունների կուսակցական համակարգերի ձևաչափերում, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 2006, թիվ 2(12), էջ 138-155: Կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Կուսակցությունները ժողովրդավարական քաղաքականության գործընթացում/Ա. Զաքարյան.-Եր.: Գիր, 2015:

[21] **Енгоян А.,** Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, Отв. ред.: К. А. Мирумян.- Ер.: Изд-во РАУ.

[22] **Պետրոսյան Գ.,** Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.) / Գ. Հ. Պետրոսյան.- ԵՊՀ. -Եր.: ԵՊՀ հրատ., 2011:

[23] **Ալեքսանյան Ա.,** Դեմոկրատիայի ցիվիլիարխիկ չափման մասին. «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019 № 2(29), էջ 52-60, http://www.old.ysu.am/files/06A_Aleksanyan-1564133834-.pdf (Վերջին դիտումը՝ 16.06.2023):

[24] **Մարգարով Ա.,** Կիսանախագահական կառավարման ձևը հետխորհրդային տարածաշրջանում, 2010 թ.:

[25] **Քոչարյան Տ.,** Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմունքների վերաբերյալ դասընթաց: Ուսումնական ձեռնարկ / Տ. Տ. Քոչարյան. – Եր.: «Ասողիկ» հրատ., 2013:

[26] **Գրիգորյան Ն.,** Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը և խորհրդարանական Հայաստանը: Մենագրություն / Ն. Գրիգորյան. - Եր.: Հեղ. հրատ., 2022:

մանն անդրադարձել է Մ. Մարգարյանը[27]: Անհրաժեշտ ենք համարում կարևորել նաև Մ. Արսենյանի՝ խորհրդարանական մշակույթին նվիրված հետազոտությունը[28]:

Մեր առջև դրված խնդիրները համալիր ուսումնասիրելու համար օգտվել ենք ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ինչպես նաև ՀՀ կուսակցությունների համացանցային համապատասխան կայքերից[29]:

Այնուհանդերձ, ՀՀ կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները կոալիցիոն կառավարության պայմաններում համալիր ուսումնասիրված չեն:

Ատենախոսության գիտական նորույթը: Ընտրված հիմնախնդրի բազմաշերտությունը ենթադրում է կոալիցիոն կառավարության պայմաններում ՀՀ կուսակցական համակարգի զարգացման ուսումնասիրում՝ գաղափարական բազմաչափության համադրելիությամբ և ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովմամբ: Ատենախոսության մեջ վերլուծվել են կոալիցիոն համագործակցությանն առնչվող խնդիրներ՝ շեշտադրելով ՀՀ քաղաքական համակարգի կերպափոխման առանձնահատկությունները ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացում՝ որպես ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման պայման: Ըստ այդմ՝ պաշտպանության ենք ներկայացնում հետևյալ դրույթները և արդյունքները.

1. Կուսակցական մարգինալության կանխման նպատակով ՀՀ–ում կարևորվել է սոցիալական և քաղաքական համակարգերի համագործակցության բազմաչափությունը, որի շրջանակներում անհրաժեշտ է հանրային քաղաքականություն մշակել և իրականացնել «գիտավերլուծական» հարացույցի արժեքաբանության հիմքի վրա: Առկա ակադեմիական ուսումնասիրություններում ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող երկրների կուսակցությունների և կուսակցական համակարգերի կայացու-

---

[27] **Մարգարյան Մ.Մ.,** Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, պատ. խմբ. Գ. Հ. Սաֆարյան, Եր., «Պետական ծառայություն», 2004: **Մարգարյան Մ.Մ.,** Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Պետական ծառայություն», 2006: **Մարգարյան Մ.Մ.,** Քաղաքական լիդերություն. տեսություն և պրակտիկա.- Եր., ՀՀ ՊԿԱ, 2017: **Մարգարյան Մ.Մ.,** Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում.- Եր., «Պետական ծառայություն» 2019: **Մարգարյան Մ.Մ., Մարգարյան Մ.Գ, Նիկողոսյան Լ.,** «Գունավոր հեղափոխություն». տեսություն և տեխնոլոգիաներ - Եր. «Պետական ծառայություն» 2021:

[28] **Արսենյան Մ.,** Խորհրդարանական մշակույթի կայացման քաղաքական նախադրյալների հարցի շուրջ. «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2016 № 1 (19), էջ 63-70: **Արսենյան Մ.,** Սոցիալականացման և վերասոցիալականացման «փափուկ ուժը» ՀՀ խորհրդարանական կառավարման ձևի ժողովրդավարացման պայմաններում. «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019 № 2 (29), էջ 67-75: **Arsenyan M.,** New Challenges of Armenian Parliamentarism and Multiparty Democracy: Illusions and Reality. Interview with Ashot Aleksanyan. EUCACIS in Brief, N 10, 2019, https://www.cife.eu/Ressources/FCK/EUCACIS%20Online%20Paper%20No%2010.pdf; **Arsenyan M.,** The Development of Parliamentary Culture from an Axiological Perspective. Interview with Mariam Margaryan. EUCACIS in Brief, N 7, 2019, https://www.cife.eu/Ressources/FCK/EUCACIS%20inBrief%20Arsenyan.pdf (Վերջին դիտումը՝ 21.03.2023):

[29] www.president.am, www.parliament.am, www.gov.am, www.arfd.am, www.bhk.am, www.hhk.am, www.civilcontract.am, www.brightarmenia.am.

մը դիտարկվել է գծային ազատականացման տիրույթում: Սոցիալ-քաղաքական համակարգի գաղափարական բազմաչափության ռացիոնալ ուսումնասիրումն անտեսվել է, ինչի հետևանքով էլ մեր իրականությունում նման հետազոտությունների ակադեմիական անհրաժեշտություն է առաջացել: Ավելին, նմանօրինակ մոտեցումը հնարավորություն կընձեռի ՀՀ-ում բնականոն զարգացնելու կուսակցական համակարգը և քաղաքական հասարակության գործառման հրամայականները, ինդեքսավորելու քաղաքական պատասխանատվությունը՝ ըստ արդյունքի կառավարման և պետականաշինության մշակույթի:

2. ՀՀ-ում քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման դիտանկյունից կոալիցիոն կառավարությունն ուսումնասիրվել է որպես ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացի կայացման պայման: Դրանով հնարավորություն ենք ստացել բացահայտելու կուսակցությունների և կուսակցական համակարգի սոցիալական պատասխանատվության քաղաքականության գործառնման զուգամիտման (կոնվերգենցիա) անհրաժեշտությունը՝ ինչպես սահմանադրահիրավական և բարոյաէթիկական արժեքաբանության, այնպես էլ ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման նկատառումներով:

3. Գաղափարական տարբեր արժեքային բևեռներում գտնվող քաղաքացիների հեղափոխականացվածությունը և մարգինալ-պոպուլիստական մասնակցությունը ժողովրդավարական անցման երկրներում ունի գլոբալ դրսևորում: Այս պարագայում հեղափոխականացվածության և մարգինալ-պոպուլիստական մասնակցության նվազեցման (մերժման) նպատակով անհրաժեշտ է ՀՀ կոալիցիոն կառավարության գործունեության հիմքում դնել համագործակցության մշակույթի սկզբունքները: Ըստ այդմ եզրահանգվել է, որ համագործակցության ֆենոմենն ուղղակիորեն առնչվում է սոցիալական պատասխանատվության քաղաքականությանը, որի հիմքի վրա էլ տեղի է ունենում բնականոն արդիականացում՝ ապահովելով գաղափարական բազմաչափություն: Այդ համատեքստում կոալիցիոն կառավարության մասնակից կուսակցությունների ինստիտուցիոնալ գործունեության պատասխանատվության մակարդակը բարձրացնելու (ապահովելու) նպատակով առաջարկվում է «կոալիցիոն կառավարության էկոլոգիա» եզրույթը:

4. Հիմնավորելով ՀՀ-ում խորհրդարանական մշակույթը որպես ժողովրդավարական անցումից համախմբման ապահովման բաղադրիչ դիտարկելու անհրաժեշտությունը՝ նորովի է սահմանվել «խորհրդարանական մշակույթ» հասկացությունը: Առաջարկում ենք խորհրդարանական մշակույթը այսուհետ դիտարկել որպես երկրի ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանին, լեգալ ու լեգիտիմ պատասխանատու գործունեություն և գաղափարական, քաղաքական, սոցիալ-հոգեբանական նորմերի ու արժեքաբանական կողմնորոշումների միջոցով ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման և հանրային համակեցության հաստատման նպատակադրմամբ արժեքային համակարգ: Այսօրինակ սահմանումը հնարավորություն է տալիս կարևորելու ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման գերակայությունը որպես քաղաքական հասարակության կայացման և ժողովրդավարության որակի հաստատման արժեքաբանության հիմք:

5. Աշխատանքում փաստարկվել է ՀՀ-ում խորհրդարանական և համագործակցային մշակույթների զուգամիտման անհրաժեշտությունը՝ որպես խորհրդարանական վերահսկողության և պատասխանատվության բարձրացման պայման: Ըստ այդմ՝ սոցիալական պա-

տասխանատվության ապահովման նպատակով անհրաժեշտ հրամայական է տրիպարտիզմի գործառումը՝ որպես գերշահույթից և մենաշնորհից հրաժարվելու կառուցակարգ:

6. Տեսամեթոդաբանական ուսումնասիրման հիմքի վրա գնահատվել է քաղաքական բնականոն արդիականացումը՝ որպես ժողովրդավարական անցումից համախմբում գործընթաց, որը ենթադրում է գաղափարական բազմաչափություն կրող կուսակցական «փափուկ» և «խելացի» ուժ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտությունը նպատակահարմար է օգտագործել ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող երկրներում կուսակցական համակարգերի և կուսակցությունների ինստիտուցիոնալ տիրույթներում՝ որպես կոալիցիոն համագործակցության գործառման գերակա պայման: Միաժամանակ, կիրառելիության տեսանկյունից հետազոտությունը նպատակահարմար է օգտագործել ՀՀ-ում կոալիցիոն համագործակցության զարգացման առումով: Այդ նպատակով ներկայացված և շրջանառված են **«կոալիցիոն շարունակական ժողովրդավարություն», «հասարակական համակարգի ցանցային կերպափոխում», «կոալիցիոն մշակույթ», «կոալիցիոն կառավարության էկոլոգիա»** եզրույթները: Աշխատանքը արժևորվում է նաև նրանով, որ կատարված վերլուծությունը փորձագետներին և հանրային քաղաքականության, ինչպես նաև կոալիցիոն կառավարության արդյունք ապահովող պատասխանատու դերակատարներին հնարավորություն կտա նորարարացնելու իրենց մասնագիտական ունակությունները՝ մշակելով կոալիցիոն կառավարության խաղային գործելակերպի ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման գործելակերպի ռազմավարություն:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական արդյունքները փորձարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնում, դասավանդվել են «Կուսակցություններ և կուսակցական համակարգեր» առարկայի շրջանակներում:

Ատենախոսության թեմայով հեղինակը հայկական պարբերականներում հրատարակել է 8 գիտական հոդված, որոնցից 2-ը՝ համահեղինակությամբ, այդ թվում 1-ը՝ Web of Science շտեմարանում ընդգրկված գիտական հրատարակությունում:

Ատենախոսության կառուցվածքը: Սույն ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքում առկա են նաև հավելվածներ: Աշխատանքի ընդհանուր ծավալը՝ 177 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել են հետազոտվող թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթն ու պաշտպանության դրված հիմնական դրույթները: Ներկայացված են ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտն ու առարկան, ինչպես նաև տեսական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության՝ «**Կուսակցական համակարգի կայացումը՝ որպես քաղաքական համակարգի բնականոն արդիականացման գործընթաց**» խորագրով երեք ենթագլուխներից բաղկացած **առաջին գլխում** դիտարկված են սոցիալական և քաղաքական համակարգերի համագործակցության բազմաչափությունը, ինչպես նաև կուսակցական կոալիցիան՝ որպես քաղաքական ցանցերի արժեքային կողմնորոշիչների կերպափոխման ինստիտուտ: Հիմնավորված է մոտեցում, որ որպես բարդ, կազմակերպված և հարաբերական անկախության մեջ գտնվող բաց ամբողջություն՝ սոցիալական և քաղաքական համակարգերի փոխհարաբերությունների բազմաչափության դիտարկումը հնարավորություն է տալիս հետազոտել ինստիտուտների միջև փոխներգործման գործընթացի բազմաչափությունը: Տվյալ պարագայում որոշիչը համակարգի գործառման պայմաններն են, որոնք մի դեպքում կարող են հավասարակշռել, ինքնակազմակերպել և ինքնակարգավորել այն (էվոլուցիոն զարգացում), իսկ մյուս դեպքում՝ ենթարկվել մեծ ցնցումների, քաոսների՝ գտնվելով մարգինալ-պոպուլիստական անորոշությունների մեջ (ռևոլուցիոն զարգացում):

Առաջին՝ «**Սոցիալական և քաղաքական համակարգերի համագործակցության բազմաչափությունը**» ենթագլխում ատենախոսը ներկայացրել է համակարգային զարգացման դինամիկան՝ վերլուծելով սիներգետիկական մեթոդաբանության միջոցով բացահայտված սոցիալ-քաղաքական ինստիտուտների հաղորդակցական կապերի փոխպայմանավորվածությունը՝ հանուն ինքնակազմակերպման հարացույցի բնականոն գործունեության: Այս համատեքստում առանձնահատուկ ներկայացված է Դ. Իստոնի, Թ. Պարսոնսի և Գ. Ալմոնդի մոտեցումները խմբային և հանրային շահերի զուգամիտման անհրաժեշտության մասին: Վերոգրյալը հնարավորություն է տվել սոցիալական և քաղաքական համակարգերի փոխհարաբերությունները դիտարկել՝ բացահայտելով քաղաքական զարգացման սիներգետիկական էֆեկտների ռեալ և խաղային բնույթը: Հիմնավորված է մոտեցումը, որ քաղաքական զարգացման պատմական, գաղափարական, սոցիալական, տնտեսական և այլ պայմանների բազմազանությունը հանգեցրել է տարբեր տեսակի կուսակցական համակարգերի առաջացման, որոնք տարբերվում են իրարից կազմակերպական կառուցվածքով, գործառույթներով, գործունեության որպիսությամբ: Այս դիտանկյունից հասարակական ընտրության տարակարծությունների (պարադոքսներ) հիմնախնդիրը ներկայացված է, որպես ընտրության գործընթացում անորոշություններ ծնող հակասություններ, որոնք ի հայտ են գալիս, ինչպես աստիճանակարգային, այնպես էլ ցանցային կառավարման ժամանակ:

Երկրորդ՝ «**Կուսակցական կոալիցիան՝ որպես քաղաքական ցանցերի արժեքային կողմնորոշիչների կերպափոխման ինստիտուտ. հասարակական ընտրության պարադոքսները**» ենթագլխում ատենախոսը, համակարգված ներկայացրել է հասարակական ընտրության տարակարծությունները՝ ըստ Ն. Կոնդորսեի և Ք. Էռոուի: Վերջիններիս հաշվառման միջոցով էլ հիմնավորվել է աստիճանակարգային և ցանցային կառավարման քաղաքակրթությունների համադրման մոտեցումը, համաձայն որի՝ անկախ կառավարման ձևից՝ քաղաքական համակարգի ժողովրդավարացման և սոցիալական տարածությունում քաղաքական գործունեության արդյունավետության ապահովման առանցքային ինստիտուտը այն կուսակցություններն են, որոնք նպատակամետորեն համագործակցում են հասարակության հետ:

Երրորդ՝ «**Կուսակցական կոալիցիաների ձևավորման խաղային կառուցակարգերը՝ որպես քաղաքական համակարգի բնականոն արդիականացման պայման**» ենթագլխում ատենախոսը որպես քաղաքական համակարգի արդիականացման պայման կարևորել է կուսակցական համակարգի զարգացման, մրցունակության և պատասխանատվության բարձրացման անհրաժեշտությունը: Ներդաշնակության մեջ այն հումանիզացնում է քաղաքական իշխանության իրականացման մշակույթը՝ բարձրացնելով կառավարման էթիկան և նպաստելով անձի սոցիալականացմանը:

Ատենախոսության «**Հայաստանի Հանրապետության կոալիցիոն կառավարությունների գործառման առանձնահատկությունները**» վերնագիրը կրող և երեք ենթագլուխներից բաղկացած **երկրորդ գլխում** ատենախոսը քննության է առել Հայաստանի առաջին հանրապետության կոալիցիոն կառավարության փորձառությունը արդի մարտահրավերների համատեքստում: Համեմատության մեջ համակարգված վերլուծել է 2003, 2008 և 2012 թվականների քաղաքական կոալիցիաները: Կարևորված է այն փաստը, որ եթե քաղաքական կուսակցությունները չեն սոցիալականացնում իրենց ընտրազանգվածին, ապա այդ հասարակությունները դառնում են մարգինալ և այլևս չեն կարևորում ընդարձակված օրակարգով անվտանգություն ապահովելու անհրաժեշտությունը: Դրա հետևանքով նախ մեխանիկորեն մերժվում է հարատև սոցիալականացման և բնականոն արդիականացման գործընթացի անհրաժեշտության գիտակցումը, ապա աստիճանաբար դանդաղում է հասարակության շարժունակությունը (մոբիլությունը):

Առաջին՝ «**Հայաստանի առաջին հանրապետության կոալիցիոն կառավարության փորձառությունը արդի մարտահրավերների համատեքստում**» ենթագլխում ատենախոսը ուսումնասիրել է արտաքին անբարենպաստ պայմաններում գործառվող Հայաստանի առաջին հանրապետության կոալիցիոն կառավարության փորձը: Վերջինիս փորձի ուսումնասիրմամբ ատենախոսը եզրահանգել է, որ Հայաստանի առաջին հանրապետության փորձառությունն ունի գործնական նշանակություն ինչպես կառավարման խորհրդարանական ձևի, այնպես էլ կուսակցական համակարգի զարգացման տեսանկյունից:

Երկրորդ՝ «**Հայաստանի Հանրապետության կոալիցիոն կառավարությունները՝ որպես ժողովրդավարական անցման գործընթացի ինստիտուցիոնալացման բաղադրիչ**» ենթագլխում ատենախոսը արձանագրել է, որ 2003 թ. մինչ օրս թե՛ օրենսդիր և թե՛ գործադիր իշխանությունում կնքված քաղաքական պակտը դիտարկվել է ոչ թե

որպես ժողովրդավարական համախմբման ինստիտուցիոնալ գործիք, այլ, մանիպուլացնելով հանրային շահերը, այն փոխադրվել է ոչ ֆորմալ հարաբերությունների դաշտ: Ավելին՝ ՀՀ-ում քաղաքական զարգացման ճգնաժամերի ձգձգվածությունը վկայել է, որ կոալիցիաների անդամները խորհրդարանում իրենց համար ժողովրդավարական համախմբման դերակատարի վարկանիշի պատրանք են ստեղծել, իսկ գերակա կուսակցությունը համաձայնել է դրան՝ շարունակելով վարել փոխհամաձայնեցված խմբիշխանական քաղաքականություն:

Երրորդ՝ «**Կոալիցիաների գաղափարական բազմաչափությունը՝ որպես ժողովրդավարական անցման կայացման պայման. ժողովրդավարության որակ**» ենթագլխում ատենախոսը եզրահանգել է, որ լինելով վարչակարգի շարունակական բարեփոխումների և բնականոն արդիականացման չափորոշիչ՝ ժողովրդավարության որակը հնարավորություն է տալիս պարբերաբար ընդարձակելու ժողովրդավարության սոցիալական տարածությունը՝ միաժամանակ ընդգծելով քաղաքացիների ընկալումները ժողովրդավարության մասին ընդհանրապես: Հիմնավորվել է մոտեցումը, որ կոալիցիոն կառավարությունը «ժողովրդավարության որակի» հաստատման գործընթաց որդեգրած երկրների հանրային քաղաքականության հիմքն է, և այդ շրջանակում համեմատության մեջ ներկայացվել է կոալիցիոն կառավարությունները Լեհաստանի Հանրապետության օրինակով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն հանդիսացել է սոցիալիստական ճամբարի առաջին երկիրը, որտեղ բազմամակարդակ մեկնարկել է ժողովրդավարական անցման գործընթացը:

Ատենախոսության **երրորդ** «**Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի բնականոն զարգացումը՝ ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացի հրամայական**» գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնցում ատենախոսը անդրադառնում է խորհրդարանական մշակույթին՝ որպես ժողովրդավարական անցումից համախմբման ապահովման գերակայություն և խորհրդարանական կառավարման պայմաններում խորհրդարանական վերահսկողության և պատասխանատվության բարձրացման հիմնախնդիրներին:

Առաջին՝ «**Խորհրդարանական մշակույթը՝ որպես ժողովրդավարական անցումից համախմբման ապահովման գերակայություն**» ենթագլխում հիմնավորված է մոտեցում, որ խորհրդարանական մշակույթի և կառավարող էլիտայի միջև առկա փոխազդեցության բացասական կողմերը հիմնականում պայմանավորված են այն փաստով, որ անկախության տարիներից ի վեր հասարակությունը մարգինալացվել է, ինչի հետևանքով էլ օտարվել է որոշումներ ընդունելու գործընթացին իրականում մասնակցելու հնարավորությունից: Դրա հիմնական պատճառն այն է, որ կառավարող վերնախավը չի իրականացրել սոցիալական պահանջմունքներ առաջադրելու և կյանքի կոչելու իր գործառույթը: Այս պարագայում խորհրդարանի առաքելությունը՝ ժողովրդական ներկայացվածության ապահովում՝ դարձել է ձևական: Ատենախոսը ամբողջացնելով խորհրդարանական մշակույթի տեսական-գաղափարական հիմքերը և վերլուծելով հասկացության կառուցվածքային ու բովանդակային բաղկացուցիչները՝ առաջարկել է հեղինակային սահմանում. *խորհրդարանական մշակույթը երկրի ներկայացուցչական մարմնի՝*

խորհրդարանի, լեգալ ու լեգիտիմ պատասխանատու գործունեություն և գաղափարական, քաղաքական, սոցիալ-հոգեբանական նորմերի ու արժեքաբանական կողմնորոշումների միջոցով ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման և հանրային համակեցության հաստատման նպատակադրմամբ արժեքային համակարգ է:

Երկրորդ՝ «**Հայաստանի Հանրապետության խորհրդարանական կառավարման պայմաններում խորհրդարանական վերահսկողության և պատասխանատվության բարձրացման հիմնախնդիրները. տրիպարտիզմ**» ենթագլխում ուսումնասիրված է ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունը: Այդ նկատառումներով սիներգետիկական և ֆունկցիոնալ-ստրուկտուրալիստական մեթոդաբանության օգնությամբ բացահայտված է ժողովրդավարական անցման երկրներում խորհրդարանական վերահսկողության և սոցիալ-քաղաքական պատասխանատվության բարձրացման մեխանիզմները: Ատենախոսը հիմնավորել է, որ ժողովրդավարական անցման գծային ազատականացումը, օտարումը և մարգինալությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է բարձրացնել իշխանության իրականացման մշակույթը՝ կարևորելով սոցիալական պատասխանատվության բազմաչափությունը: Այդ համատեքստում ներկայացված է տրիպարտիզմի քաղաքատնտեսական հիմքերը, ինչը հնարավորություն է ընձեռել կառավարող վերնախավի, բիզնես էլիտայի և արհմիությունների համագործակցությունը: Հիմնավորվել է, որ ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացը ձևական բնույթ է կրում, եթե չի կիրառվում տրիպարտիզմի քաղաքականություն:

«**Եզրակացություն**» մասում ամփոփված են ատենախոսության արդյունքները, որոնց հիման վրա կատարված են առաջարկություններ: Ստացված արդյունքներից հարկ է առանձնացնել հետևյալները.

1. Քաղաքական գիտության շրջանակներում սոցիալական և քաղաքական համակարգերի համագործակցության բազմաչափությունն ուսումնասիրելով սիներգետիկական մեթոդաբանությամբ՝ հնարավորություն ենք ստանում ինստիտուտների ֆորմալ կառուցվածքների վերլուծությունից անցնելու ինստիտուտների միջև փոխներգործության բացահայտմանը: Ավելին, սոցիալական և քաղաքական համակարգերի համագործակցության բազմաչափության այսպիսի ընկալմամբ կարող ենք նախ խուսափել, ապա նաև հնարավորինս արագ հաղթահարել տարաբնույթ քաոսները, ճգնաժամերը, բախումները և անկայունությունները, եթե «գիտավերլուծական» հարացույցի սկզբունքի շրջանակում իրականացնենք համագործակցությունը զարգացնելու և հակահամակարգային շարժումները կանխելու քաղաքականություն:

2. Ցանցային կառավարման առանձնահատկություններով պայմանավորված՝ սոցիալական և քաղաքական համակարգերն իրենց անվտանգության ապահովման նկատառումներով զարգացնում են համագործակցության բազմաչափությունը, քանի որ միայն այդ պայմաններում է հնարավոր թույլ չտալ սեփական «Ես»-ի ամբողջական և՛ զավթում, և՛ բացահայտում: Այս ամենի օգնությամբ բնականոն արդիականանում է սոցիալական օրգանիզմի ինքնապաշտպանական համակարգը՝ չանտեսելով ռացիոնալ և իռացիոնալ վարքի դրսևորումը քաղաքական զարգացման գործընթացում:

3. Ցանցային կառավարման պայմաններում, երբ «սեղմվել է ժամանակը», և բացվել են տարածությունները, հեղափոխականացմամբ և մարգինալությամբ ձևավորվող բաց համակարգերը ցանկացած «հարմար» պահի կարող են հայտնվել (ընկնել) վտանգավոր անհավասարակշռության վիճակում՝ հասնելով ինքնաքայքայման, ինքնատրոհման: Հետևաբար, սիներգիզմի դրսևորման պարտադիր պայմաններից մեկը սոցիալական և քաղաքական համակարգերի համագործակցության բազմաչափությունն է՝ պատմության հոլովույթում ձևավորված արժեշահային պարույրի բնականոն արդիականացումն ապահովելու նկատառումներով: Այս պարագայում գերակա նշանակություն ունի սոցիալական և քաղաքական համակարգերի արժեքային դաշտի գաղափարական բնութագիրը, որովհետև այն միտված է դեպի կուսակցության՝ որպես քաղաքական համակարգի առանցքային ինստիտուտի կայացմանը:

4. Կուսակցական համակարգը բնականոն կարգավորվող, բիֆուրկացիոն անցումով վերակարգավորվող, հարաբերական անկախության մեջ գտնվող և համագործակցություն ենթադրող որակական ամբողջականություն է: Վերջինս իր բազմաչափ դրսևորումներով հասարակական և քաղաքական գործունեությունը դիտարկում է որպես շարժում, տեղափոխություն, ձևափոխություն, քանի որ այն, որպես ինովացիա պարունակող մեծություն, տարբերակելով արժեշահային համակարգի գաղափարական փոփոխությունները, ենթադրում է համագործակցություն: Համագործակցությունը, որպես սոցիալական և քաղաքական համակարգերի փոխհարաբերությունների բազմաչափությունն արտահայտող սկզբունք, կայուն կենսագործունեության և շարունակական զարգացման որակական վերակարգավորումների անընդհատ ընթացք է ապահովում:

5. Քաղաքական զարգացման պատմական, սոցիալական, տնտեսական և այլ պայմանների բազմազանությունը հանգեցրել է տարբեր տեսակի կուսակցական համակարգերի առաջացման, որոնք տարբերվում են իրարից կազմակերպական կառուցվածքով, գործառույթներով, գաղափարական հիմքով, գործունեության բնույթով: Այստեղից էլ՝ արդի քաղաքական անորոշությամբ ու խառնաշփոթ գործընթացներով պայմանավորված հասարակական ընտրության տարակարծությունների (պարադոքսների) հիմնախնդիրը անհրաժեշտ է ուսումնասիրել՝ կարևորելով ինչպես «ընտրություն» երևույթի հակասությունները, այնպես էլ «ժողովրդավարություն» խաղի ծնած անորոշությունները: Նկատի պետք է ունենալ, որ տարակարծությունների հիմքը՝ տարբեր գաղափարների վրա գործառվող կուսակցությունների կողմից իրականացվող քաղաքականությունը, կարող է բավարարել միայն որոշակի սոցիալական խմբերի շահերը:

6. Քաղաքական կուսակցությունը՝ որպես քաղաքական համակարգի առանցքային ինստիտուտ, միաժամանակ նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտ է: Որպես այդպիսին՝ այն ունի որոշակի իրավական կարգավիճակ և այդ կարգավիճակից բխող գործառույթներ, ինչպես նաև որոշակի գաղափարախոսության կրող է, որը, քաղաքական ժամանակի հրամայականներից ելնելով, ենթադրում է զուգամիտումներ: Այդ զուգամիտումների հիմքում նպատակահարմար է դնել էկոլոգոցենտրիզմը և նոր հումանիզմը՝ իր գոյաբանական հրամայականներով: Այսինքն, այսօր ցանկացած հասարակություն չի կարող բացարձակացնել որևէ գաղափարախոսություն, քանի որ ունի նոր

աշխարհակարգի ձևավորման անորոշություններով ու տուրբուլենտությամբ պայմանավորված բազմաթիվ մարտահրավերներին պատասխանելու անհրաժեշտություն: Այս տիրույթներում էլ կուսակցությունները պարտավոր են իրականացնել քաղաքականություն ոչ միայն հանուն իշխանության, այլև ժողովրդավարության որակի բարձրացման: Տվյալ մոտեցումը մեզ հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ կուսակցություններն ընդարձակում են իրենց սոցիալական տարածությունը, եթե մեծացնում են պատասխանատվության աստիճանը և իրենց դասական գործառույթներին ավելացնում ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման համակարգը:

7. Ժողովրդավարական անցման գործընթացում նոր ժողովրդավար կուսակցությունների ձևավորման և գործառման միտումները նկատի ունենալով՝ անհրաժեշտ է շեշտել, որ քաղաքական պատասխանատվության փոփոխականները պայմանավորված են ինչպես «հնարավորությունների կառուցվածքի» (opportunity structure) հաշվառմամբ, այնպես էլ այն անհատ դերակատարների վարքագծով, որոնք մարգինալացնում են և՛ կուսակցության անդամների, և՛ ընտրազանգվածի գործունեությունը: Ժողովրդական անցման գործընթացում ձգձգվող քաղաքական զարգացման ճգնաժամերը նպաստեցին «ունիվերսալ կուսակցությունների («catch-all party»)» ոչ միայն ձևավորմանը, այլև ակտիվ գործունեություն ծավալելուն: Որպես «ունիվերսալ կուսակցության» տարատեսակ՝ «catch-all party»-ները իրենց շուրջը համախմբում են հնարավորինս շատ ընտրողների տարբեր սոցիալական, էթնիկական և այլ խմբերից, տարբեր գաղափարների, հետաքրքրությունների տեր մարդկանց: «Catch-all party»-ները պրագմատիկ են գաղափարախոսության տեսանկյունից, ունեն ճկուն քաղաքական գիծ, ձևավորվում են ընդդիմադիր հայացքներ ունեցող խարիզմատիկ առաջնորդների շուրջը, որոնք ընդունակ են համախմբելու օտարված ու «սպասումների հիասթափության» մեջ հայտնված դժգոհ և մարգինալ հանրությանը՝ միաժամանակ քաղաքական գործընթացում ներգրավելով երիտասարդների:

8. Catch-all կուսակցությունների միջոցով տեղի է ունենում տրիպարտիստական կարտելի ձևավորում, որը բաղկացած է պետությունից, կուսակցությունից ու շահային խմբերից (O. Քիրխհայմեր): Catch-all կուսակցությունների գաղափարական հիմքերը խիստ հեղհեղուկ են: Ժամանակի ընթացքում դրանք աստիճանաբար զբաղեցնում են կենտրոնական կամ ձախակողմյան դիրք, և եթե «անձրևանոցի» վերածվելու գործընթացը չվերահսկվի, կդառնան քաղաքական դատարկություն՝ պատրանքային և մարգինալ վերաբերմունք մշակելով հանուն ամեն «լավի», ընդդեմ ամեն «վատի»: Նման գործընթացները մեծ ընտրազանգված գրավելու նպատակով ստեղծում և միավորում են բոլոր փոքր կուսակցություններին, որոնց միջոցով քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարումը խիստ խաղային բնույթ է ստանում: Ավելին, սոցիալական էներգիայի պարպումը ուղղորդվում է ոչ թե մարգինալության և օտարման կանխմանը, այլ նոր որակի մարգինալ սոցիալական խմբերի առաջացմանն ու ներգրավմանը:

9. Կուսակցական համակարգի զարգացումը կոալիցիոն կառավարության պայմաններում ներառում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են օրինակ՝ շուկա, օգուտ և շահ, փոխանակում, արդյունավետություն և այլն: Ռացիոնալ ընտրության տե-

սության տեսանկյունից մարդիկ՝ լինեն ընտրողներ, թե քաղաքական առաջնորդներ, քաղաքականության մեջ ձգտում են առավելագույնս օգուտ ստանալ: Այսինքն, ընտրողը խաղարկում է իր նախընտրությունները, երբ տեսնում է, որ կարող է շահ չունենալ: Իսկ ընտրություններում հաղթելու համար քաղաքական կուսակցությունները փորձում են ստանալ որքան հնարավոր է շատ ընտրողների աջակցություն, այսինքն՝ ընդլայնում են իրենց հիմնական շահը: Դրանով է պայմանավորված «անտոմս երթևեկողի» կամ «ուժեղների կողմից թույլերի շահագործման» խնդիրը, երբ կոլեկտիվ բարիքի արտադրման ծախսերն իրենց վրա են վերցնում հասարակության ուժեղ անդամները՝ թաքնահարույց (լատենտ) ձևավորելով փոխհամաձայնեցված խմբիշխանություն: Ուստի, իշխանության համար մղվող քաղաքական պայքարում քաղաքականությունը երկու կամ ավելի մասնակիցներով խաղ է՝ զրոյական կամ ոչ զրոյական գումարով:

10. Քաղաքականությունը որպես խաղ դիտարկելու պարագայում շեշտադրվում են մասնակիցների ազատ ընտրության սահմանները. մասնակիցները, հստակեցնելով իրենց նախընտրությունները, գնահատում են, թե ինչպիսի այլընտրանքային ռազմավարություններ կարող են բավարարել իրենց՝ որոշակի մրցակիցների առկայության պայմաններում: Խաղի միջոցով մշակվում է ելքերի տարբերակներ՝ զուգակցելով ազատ կամքի և ընդհանրացման հնարավորությունը: Փաստորեն, անհատների միջև քաղաքական գաղափարների փոխանակումը հիմնվում է ազատ և հավասար մարդկանց վերաբերյալ սկզբնական կոնսենսուսի գաղափարի վրա: Այսպիսով, քաղաքականությունն իրենից ներկայացնում է անհատների միջև փոխանակում և քաղաքական ինստիտուտների ստեղծում, որոնց հիմքում առկա սկզբնական կոնսենսուսը ենթադրում է խաղերի միջոցով կոալիցիաների ձևավորում և իշխանության բաշխում՝ ըստ Ք. Էռոուի «անհավանականության» թեորեմի և «միջին ընտրողի» սկզբունքի:

11. Համեմատական քաղաքական գիտության շրջանակներում կոալիցիաները հիմք են հանդիսանում ընտրություններում քվեարկողների նախընտրությունների և այլընտրանքների, օրենքների կիրառման արդյունքը: Կոալիցիոն համագործակցությունը հիմնականում կիրառվում է այն քաղաքական համակարգերի նկատմամբ, որտեղ խորհրդարանը ձևավորվում է մեծ թվով կուսակցությունների ներկայացուցիչներից, քանի որ դրանցից յուրաքանչյուրը միայնակ ի վիճակի չէ ձևավորել կառավարություն և քաղաքական որոշումներ անցկացնել քվեարկության միջոցով: Կոալիցիաների ձևավորման մոդելները տարբերվում են խաղերի տեսության վրա հիմնված քվեարկության մոդելներից: Այստեղ խոսքը ձայների միավորման մասին է և, հետևաբար, կոոպերատիվ խաղերի մասին: Խաղերի տեսության կիրառումը համաձայնություններն ու կոալիցիաների ձևավորումը ներառող խնդիրների նկատմամբ առաջ է բերում երկու տիպի մոդելներ՝ ստատիկ և դինամիկ: Առաջինը չի ներառում կառուցվածքային կամ սուբյեկտիվ գործոնների հետ կապված լրացուցիչ փոփոխականներ: Երկրորդը մեծապես և՛ նկարագրողական, և՛ վարքաբանական բնույթ ունի: Առաջին խումբը հիմնվում է կոալիցիայի քանակական հատկանիշների վրա, երկրորդը ներառում է կոալիցիայի մասնակիցների քաղաքական դիրքորոշումների նմանության դիտարկումը:

12. ՀՀ-ում հասարակական համակարգի զարգացման ու նոր ինստիտուցիոնալ կառույցների ձևավորման գործում մեծ է առաջավոր փորձի յուրացման դերը: Սակայն կարևոր է ոչ թե այդ փորձի պարզ կրկնօրինակումը, այլ դրա մեթոդական զինանոցի կոնկրետ կիրառումը հասարակական համակարգի տեղական, ազգային առանձնահատկություններին ու հիմնախնդիրներին համապատասխան: Միայն այդպիսի մոտեցման դեպքում կարելի է ապահովել հասարակական համակարգի անվտանգությունն ու ներդաշնակ զարգացումը:

13. ՀՀ-ում գործող կուսակցությունները դժվար է ներկայացնել որպես դասական իմաստով կայացած, սոցիալական լուրջ հենք ունեցող և հասարակայնորեն ներկայացուցչական ինստիտուտներ: Դա պայմանավորված է հասարակական համակարգի դեռևս անկայուն նկարագրով, այդ ոլորտում տեղի ունեցող խմորումներով, սոցիալական խավերի ու շերտերի ոչ հստակ գծագրմամբ, ինչպես նաև քաղաքական զարգացման ճգնաժամերի ձգձգվածությամբ:

14. Գործող կուսակցությունների հիմնական մասը, համակիրների սակավաթիվ և ոչ կայուն խմբերից զատ, չունի մշտական սոցիալական հենարան: Դրանք զանգվածային, կադրային, իրավիճակային, առանձին դեպքերում նաև խարիզմատիկ կազմակերպություններ են, որոնք ավելի շուտ մի խումբ գործիչների միավորումներ են հիշեցնում, քան սոցիալական լայն խավերի շահերն արտահայտող քաղաքական ինստիտուտներ: Այնպես որ ՀՀ-ում քաղաքականությունն առայժմ զգալի չափով ներկայանում է որպես անհատների ու համախոհների առանձին խմբերի պայքար, քան հասարակայնորեն ձևավորված ներկայացուցչական ուժերի դիսկուրս:

15. ՀՀ-ում քաղաքական իշխանությունների տարբեր մակարդակներում ընտրությունների նախաշեմին կուսակցությունների և քաղաքական ուժերի միջև ձևավորվող դաշինքներն ու խմբավորումներն ավելի շուտ դրանց առաջնորդների, ազդեցիկ քաղաքական դեմքերի միջև ժամանակավոր համաձայնության և գործողությունների համաձայնեցման արդյունք են, քան գաղափարախոսական, ծրագրային մերձության և սոցիալական հենքի ընդհանրության վրա կայացած միություններ: Նույն հարթության վրա պետք է դիտարկել նաև կուսակցությունների, խորհրդարանական խմբակցությունների ու պատգամավորների իրավիճակային գործելակերպը, կոնյուկտուրայի փոփոխությամբ պայմանավորված՝ «անսպասելի» շրջադարձերը գաղափարական և քաղաքական դաշտում, որոնք տեղի չէին ունենա համապատասխան հասարակական պատվերի և վերահսկողության առկայության պարագայում:

16. Ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացի հիմքում հանրային քաղաքական մասնակցության (participatory politics) բնականոն արդիականացումն է: Այս առումով ընդունելի չէ ժողովրդավարացումը դիտարկել միայն որպես հանրության մասնակցություն ընտրություններին, քանի որ այդ գործընթացների միջև ընկած ժամանակահատվածում քաղաքացիները և քաղաքական վերնախավը շարունակում են մնալ միմյանցից օտարված: Դա էլ, խոչընդոտելով քաղաքական հասարակության ձևավորման գործընթացը, նպաստավոր պայմաններ է ստեղծում չհիմնավորված նկրտումներով բողոքի կրիչ հեղափոխական մարգինալ պոպուլիստական ուժերի և catch-all կուսակ-

ցությունների հաղթանակի համար: Հետևաբար, խորհրդարանական կառավարման պայմաններում կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների հիմնական գործառույթը պետք է լինի հասարակության առաջարկի և պահանջարկի հաշվարկը, որի վերջնանպատակ հանրային իրական օրակարգը բնականոն արդիականացումն է՝ առանց ռացիոնալի և իռացիոնալի մերժման կամ որևիցե մեկի բացարձակացման: Այս պարագայում որոշիչ նշանակություն ունի կիբեռցանցային տարածությունը, որի օգնությամբ կուսակցական էլիտան պարտավոր է հրաժարվել ժողովրդավարացման գործընթացների մարգինալ-պոպուլիստական ձևաչափից՝ հանրության հետ բանակցելու և ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման և կեղծ օրակարգերի բացառման (նվազեցման) նկատառումներով:

17. Քաղաքական դաշտին և կազմակերպություններին բնորոշ «անձնավորվածությունը» բնական կարելի է համարել անցումային հասարակության համար, քանի որ նոր ձևավորվող կառույցներում գործառության իներտության և մեխանիզմների անխափան ու ներդաշնակ գործունեության բացակայության պայմաններում չափազանց կարևորվում է անհատի դերը: Համակարգի գործունեության հաջողությունները (երբեմն էլ՝ անգամ դրա գոյությունը) գլխավորապես կախված են առաջնորդի կարողություններից, փորձից ու հմտություններից: Մինչդեռ, գործառության հստակ մեխանիզմներ ունեցող և որոշակի իներտությամբ օժտված համակարգերը հաճախ հիշեցնում են վարժ նվագախումբ, որն առանձին դեպքերում ի վիճակի է կատարել իր առաքելությունը նաև առանց դիրիժորի: Ստացվում է մի իրավիճակ, երբ իշխանության կառույցներին ու քաղաքական կուսակցություններին հատուկ է անձնավորվածությունը, իսկ ժողովրդական զանգվածներին՝ անդիմությունն ու անկազմակերպվածությունը:

18. Ժողովրդավարության որակի բարձրացման համար օրենսդրական նորմերն ու համապատասխան իրավական դաշտն անհրաժեշտ են, սակայն՝ ոչ բավարար: Հարկավոր են դրանց իրագործման մեխանիզմներ՝ հասարակական վերահսկողության և խորհրդարանական ու քաղաքացիական մշակույթի զարգացման համար:

19. Կուսակցական կոալիցիայի կազմավորման ձևերը բազմազան են: Ուստի, պայմանավորված որոշակի քաղաքական իրավիճակով՝ արդիական է իշխանության իրականացման մշակույթը, որի հիմքը ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման գործընթացն ու ժողովրդավարության որակի բնականոն զարգացումն են:

Վերոշարադրյալ *եզրակացությունները* հնարավորություն են տալիս ներկայացնելու հետևյալ **առաջարկությունները**.

1. Նկատի ունենալով ՀՀ կուսակցական համակարգի տրոհվածությունը, քաղաքական գործընթացների իրավիճակային և ժողովրդահաճ բնույթը՝ քաղաքական օրակարգ բերել ՀՀ կուսակցությունների մասին օրենքի նախագիծ: Այն պետք է սահմանի, թե ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացում կուսակցությունները ինչպիսի գործառույթներ պետք է որդեգրեն՝ բարձրացնելով կուսակցության պատասխանատվությունը:

2. «Կուսակցությունների մասին» ՀՀ նոր օրենքում պետք է ամրագրել հետևյալ դրույթը. «Կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե չի մասնակցել Ազգային ժողովի

երկու ընտրություններին, կամ դրանցից որևէ մեկում նրա ընտրական ցուցակն ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի մեկ տոկոսից պակաս ձայն»: Նման մոտեցումը հնարավորություն կտա քաղաքական գործընթացներում նվազագույնի հասցնելու մարգինալ վարք դրսևորող կուսակցությունների գործունեությունը: Վերջին տարիների փորձը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենքի այս դրույթը իր դրական նկատառումներով հնարավորություն է ընձեռում զարգացնելու ինչպես կուսակցականության մշակույթը, այնպես էլ կուսակցականների սոցիալականացումը:

3. ՀՀ կուսակցությունները պետք է կոալիցիաներ կազմեն պատասխանատվության, «լավ կառավարման» սկզբունքի, ժողովրդավարության որակի բարձրացման հիմքի վրա: Այս պարագայում միայն կուսակցությունների կողմից ոչ միայն մարգինալ- պոպուլիստական օրակարգի կիրառումը կհասցվի նվազագույնի, այլև նրանց միջև քաղաքական հայացքների տարբերությունը հնարավորինս փոքր կլինի՝ կոալիցիաների նվազագույն տատանում: Նման կոալիցիաները, կիրառելով «գիտավերլուծական» հարացույցի սկզբունքները, կարող են նպաստել քաղաքական զարգացումների ճգնաժամերի հաղթահարմանը:

4. Ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող երկրների քաղաքական կոալիցիաների համեմատական վերլուծության փորձից ակնհայտ է դառնում, որ ցանկացած հասարակության մեջ գաղափարախոսական համակարգը քաղաքական համակարգի զարգացման բնորոշ ենթահամակարգերից է և գերակա տեղ ու դեր ունի քաղաքական համաձայնության կնքման գործընթացում: Հայաստանի երրորդ Հանրապետության կազմավորումից մինչ օրս այդ ենթահամակարգը կայացման գործընթացում է և շարունակում է էական փոփոխություններ կրել, ինչն էլ, իր հերթին, բացասաբար է ազդում ՀՀ քաղաքական համակարգի կերպափոխման և ՀՀ պետական կառավարման ժողովրդավարացման վրա:

5. Կոալիցիոն կառավարություններից յուրաքանչյուրն ունի իր քաղաքական կենսագրությունը: Սակայն կոալիցիոն կառավարությունները պարտավոր են բնականոն իրականացնել ընդհանուրի համաձայնության վրա հիմնված շարունակական բարեփոխումների քաղաքականություն, որը, մերժելով կուսակցական մարգինալությունն ու պատրանքային հեղափոխականությունը և իրատեսորեն արտահայտելով երկրի ընտրազանգվածի ակնկալիքը, բարձրացնում է յուրաքանչյուրի պատասխանատվությունը հանուն ժողովրդավարության որակի:

6. Կոալիցիոն կառավարությունների մարգինալության կանխման նկատառումներով ՀՀ-ում մասնակցային ժողովրդավարության հետ զուգահեռ ինստիտուցիոնալացնել կուսակցությունների պատասխանատվության մակարդակը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից **հրատարակված** հետևյալ **գիտական աշխատություններում**.

1. Ալեքսանյան Է., **Կոալիցիոն կառավարությունն որպես կուսակցական համակարգի կայացման գործընթաց**. «Հանրային կառավարում», ՀՀ պետական կառավարման ակադեմիա, գիտական հանդես, N 1, Երևան, 2013, էջ 188-194:

2. Ալեքսանյան Է., **Կոալիցիոն կառավարության գործունեության համեմատական վերլուծություն**. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները: Գիտաժողովի նյութերի ժողովածու/ խմբ. խորհուրդ – Երևան, ՀՀ Եվրասիա միջազգային համալսարան, Գիրք 2, 2013, էջ 284-290:

3. Ալեքսանյան Է., **Քաղաքական կոալիցիաների գաղափարական հիմքերի կերպափոխման հիմնախնդիրը ՀՀ կուսակցական համակարգի արդիականացման գործընթացում**. «Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, Հատուկ թողարկում, Մաս 1, 27-28 մարտի 2014 թ., «Հանրային կառավարում», ՀՀ պետական կառավարման ակադեմիա գիտական հանդես, էջ 134-141:

4. Ալեքսանյան Է., **Համացանցը և քաղաքական կուսակցությունների զարգացման միտումները**. «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, 2016, թիվ 2(66), էջ 119-129:

5. Ալեքսանյան Է., **Հայաստանի առաջին հանրապետության կոալիցիոն կառավարության փորձից.** «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(11), Երևան, 2016, էջ 303-308:

6. Ալեքսանյան Է., **Սոցիալական և քաղաքական համակարգերի համագործակցության բազմաչափությունը**. «Հանրային կառավարում», ՀՀ պետական կառավարման ակադեմիա, գիտական հանդես, N 1, Երևան, 2023, էջ 245-259:

7. Margaryan M., Aleksanyan E., **Coalitions as a Factor in the Institutionalization of the Transition to Democracy.** «Wisdom», ASPU Publication, YEREVAN, 2023, N2(66), pp. 31-38.

8. Margaryan M., Aleksanyan E., **Issues of Increasing the Responsibility of Parliamentary Governance of the Republic of Armenia: Tripartism.** ALTERNATIVE Quarterly Academic Journal Economy & Management, 2023 # 3, July – September, pp.68-80.

АЛЕКСАНЯН ЭДГАР ЭДИКОВИЧ

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ПАРТИЙНОЙ СИСТЕМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В УСЛОВИЯХ КОАЛИЦИОННОГО ПРАВИТЕЛЬСТВА

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности ИГ.00.02 «Политические институты и процессы».
Защита диссертации состоится в 14.00 21 декабря 2023г. в специализированном совете 056 «Политология и международные отношения» ВАК РА, действующем в Ереванском государственном университете (адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1)

Резюме

Во введении были обоснованы актуальность, цель и задачи исследуемой темы, научная новизна и основные положения, поставленные на защиту диссертационной работы. Представлены ее теоретическая и практическая значимость, степень проработанности проблемы, объект и предмет исследования, а также теоретические и методологические основы.

В первой главе диссертации, под названием «Становление партийной системы как процесс естественной модернизации политической системы», состоящей из трех подзаголовков, рассматривается многомерность сотрудничества социальных и политических систем, а также партийная коалиция как институт трансформации ценностных ориентиров политических сетей. Обоснован подход, согласно которому, как сложное, организованное и находящееся в относительной независимости открытое целое, рассмотрение многогранности взаимоотношений социальных и политических систем дает возможность исследовать многомерность процесса взаимодействия между институтами. В данном случае определяющими являются условия функционирования системы, которые в одном случае могут уравновесить, самоорганизовать и саморегулировать ее (эволюционное развитие), а в другом случае - подвергнуться большим потрясениям, хаосам, находясь в маргинально - популистских неопределенностях (революционноее развитие).

Во второй главе диссертации, под названием «Особенности функционирования коалиционных правительств Республики Армения» и состоящей из трех подзаголовков, диссертантом рассмотрен опыт коалиционного правительства Первой Республики Армения в контексте современных вызовов. В сравнении систематически анализировали политические коалиции 2003, 2008 и 2012 годов. Подчеркивается тот факт, что если политические партии не социализируют свой электорат, то эти общества становятся маргинальными и больше не придают значения необходимости обеспечения безопасности с расширенной повесткой дня. Вследствие этого сначала механически отвергается осознание необходимости длительной социализации и процесса естественной модернизации, затем постепенно замедляется мобильность общества.

Третья глава диссертации «Нормальное развитие партийной системы Республики Армения: императив процесса консолидации от демократического перехода» состоит из двух подзаголовков, в которых диссертант рассматривает парламентскую культуру как приоритет обеспечения консолидации от демократического перехода к проблемам повышения парламентского контроля и ответственности в условиях парламентского правления.

Обоснован подход, что негативные аспекты взаимодействия между парламентской культурой и правящей элитой в основном обусловлены тем, что со времен независимости общество маргинализировалось, вследствие чего отчуждалось от возможности реально участвовать в процессе принятия решений. Основная причина этого в том, что правящая элита не выполнила свою функцию выдвижения и претворения в жизнь социальных потребностей. В этом случае миссия парламента – обеспечение народного присутствия, стала формальной.

Обобщив теоретические идейные основы парламентской культуры и проанализировав структурные и содержательные составляющие компоненты, диссертант предложил авторское определение: парламентская культура - это законная и легитимная ответственная деятельность представительного органа страны - парламента и система ценностей с целью обеспечения безопасности и установления общественного сосуществования с повесткой, расширенной посредством идеологических, политических, социально-психологических и ценностных ориентаций.

Изучена необходимость повышения эффективности процесса от демократического перехода к консолидации. С учетом этих соображений с помощью синергетической и функционально-структуралистской методологии выявлены механизмы парламентского контроля и повышения социально-политической ответственности в странах демократического перехода. Диссертант обосновал, что для преодоления линейной либерализации, отчуждения и маргинальности демократического перехода необходимо повысить культуру осуществления власти, придавая важное значение многомерности социальной ответственности. В этом контексте представлены политико-экономические основы трипартизма, что дало возможность сотрудничеству правящей элиты, бизнес-элиты и профсоюзов.

Было обосновано, что процесс от демократического перехода к консолидации носит формальный характер, если не применяется политика трипартизма.

EDGAR EDIK ALEKSANYAN

The Main Problems of the Development of the Party System of the Republic of Armenia in Conditions of the Coalition Government

Dissertation under IG.00.02 - "Political Institutions and Processes" aspiring to earn PhD in Political Sciences.
The defense of the dissertation will take place at 2.00 p.m., December 21th, 2023, at the session of Specialized Council 056 specializing in "Political Sciences and International Relations" of the Higher Attestation Committee of the RA YSU
(Address: Republic of Armenia, Yerevan, 0025, 1 Alex Manoogian 1)

RESUME

The introduction of the dissertation substantiates the relevance, objectives and issues of the thesis under study, scientific novelty and the main provisions set for defence. The theoretical and applied significance of the dissertation, the extent to which the issue is elaborated, the object and subject of the study, as well as theoretical and methodological foundations, are presented.

Consisting of three subchapters, the **first chapter** of the dissertation entitled **"Formation of the Party System as a Process of Natural Modernization of the Political System"** explores the multidimensionality of cooperation between social and political systems, as well as the party coalition as an institution for the transformation of value orientations of political networks. An approach is substantiated, according to which, as a complex, organized and relatively independent open integrity, the consideration of the multidimensionality of the relationship between social and political systems enables the exploration of the multidimensionality of the interaction process between institutions. In this circumstance, the operating conditions of the system are decisive, which in one case can balance, self-organize and self-regulate it (evolutionary development), and in the other case, be subject to great shocks and chaos, being in marginal populist uncertainties (revolutionary development).

In the **second chapter** of the dissertation, comprising three subchapters, entitled **"Peculiarities of Functioning of the Coalition Governments of the Republic of Armenia",** the researcher studies the experience of the coalition government during the First Republic of Armenia and its relevance in facing contemporary challenges. He has systematically analyzed the political coalitions of 2003, 2008 and 2012 in comparison. The fact is emphasized that if political parties do not socialize their electorate, then these societies become marginal and no longer attach importance to the need to ensure security with an expanded agenda. As a result of this, the realization of the need for long-term socialization and the process of regular modernization is first mechanically rejected, and then the mobility of society gradually slows down.

In the third chapter of the dissertation, comprising two subchapters, **"The Regular Development of the Party System of the Republic of Armenia: the Imperative of the**

Process for Democratic Transition to Consolidation" the researcher addresses parliamentary culture as a priority of ensuring consolidation from the democratic transition and the problems of increasing parliamentary control and responsibility in the conditions of parliamentary government.

Justifies the approach that the negative aspects of the interaction between parliamentary culture and the ruling elite are mainly due to the fact that the society has been marginalized since independence, as a result of which it has been alienated from the opportunity to participate in the decision-making process. The main reason for this is that the ruling elite has failed to perform its function of setting social needs and implementing them. In this instance, the mission of the parliament, namely ensuring public representation, becomes formal. Summarizing the theoretical and ideological foundations of parliamentary culture and analyzing the structural and substantive components of the concept, the researcher has proposed the author's definition: *parliamentary culture is a legal and legitimate responsible activity of the representative body of the country - the parliament, as well as a system of values to ensure security and establish public coexistence with an agenda expanded through ideological, political, socio-psychological norms and value orientations.*

Discusses the necessity to increase the management of the outcome of the process from democratic transition to consolidation. To this end, with the help of a synergetic and functional-structuralist methodology, the mechanisms of parliamentary control and increasing socio-political responsibility in the countries of democratic transition have been identified. The researcher has justified that to overcome the marginality derived in the process of the democratic transition, it is necessary to increase the culture of exercising power, emphasizing the priority component of managing the outcome of social responsibility. In this context, the political and economic foundations of tripartism are introduced, which enabled the authors to reveal the cooperation of the ruling elite, the business elite and the trade unions. It is justified that the process from democratic transition to consolidation has a formal nature if the policy of tripartism is not applied.